ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՀԱՆԳԻՍՏԸ ԴԵՌ ՀՐԱԴԱՐՈՒ ՉԷ

Երևան, 19 օգոստոսի— Նախիջևանյան պարարձիկ ադրբեջանական բանակի ձեռնարկած ռազմական մի քանի անհաջող գործողություններից հետո, վերջին չորս օրերին, Հայաստանի սահմանային բոլոր գոտիներում նոր ձեռնարկումներ չեն արձանագրվել: Ադրբեջանական կողմը, հասարակված ոչ այնքան կեցյուն հրադադարը խախտելու և հայկական ինքնապաշտպանական ուժերը նոր ռազմական միջադեպերի մեջ ներքաշելու փորձերից հետո, առայժմ գերադասում է լռել: Միևնույն ժամանակ, հանրապետության սահմանային առանձին գրարձքների մոտ նկատվել են հակառակորդի ռազմական ուժերի նոր կուտակումներ:

«ՓԱՍ»